

սկսին կատարել ի ներկայութեան պարուն Հիւպատոսին . հոն բօլոր ջերմեռանդ ժողովուրդը կը հաղորդուի , և Գեր . Խասհակ Արքազանը համառօտ առենաբանութիւնի զանոնք մի իմաստարելով ու արձակելավ , կ'օրհնէ և դրարեսիրտ Պ . Լ իսպուլ հիւպատոսը , գովելով նորս ցոյց տուած քրիստոնէտայել մարդասիրութիւն և ազատամութիւն , որու իրենց խորին շնորհակալութիւնը յայտնելով և Վմեն . Արքազան Պատրիարք հօր լուսանկար սպատիերը նըւիրելով , նա ալ փոխադարձ իւր պատկերը կը խրկէ նամակու առ Արքազան Պատրիարքն :

Այս ալ չմոռնանք ըսելու , որ պանդուխու հայոց մէջ 30 ի շափ անձնորտկարութեան և հիւանդութեան պատճառաւ չկրնալ գալելուն՝ Գեր . Խասհակ Արքազանը ՊՔքժա . Տիմոնթէ սավարդապետը յատկապէս կը խրկէ ի Յարլութ , ուր զանոնք խոստովանեցը նելով կը հաղորդէ . և յետոյ ժողովը դեան հետ Ատինաց գերեզմանատունը կ'իրթայ , և հոն առանց թաղման օրհնութեան թաղուած չորս կտրիճ նիշեցելոց գերեզմաններուն վերայ թաղման ամբողջ խորհուրդը կատարելով կ'օրհնէ : Այս խեղձերը թէպէտ և խոստավանիլ ու հաղորդուիլ խընդրած են լատին քահանացիցմէ , բայց նորա չեն ուղած մատակարարել : Յիշեալ գերեզմանատունն ալ թէպէտ և լուտինաց անուամբը կը յիշուի եղեր , սակայն տեղւոյն Վֆէնտինան նոյն տեղը ձրի չնորհած է ի խնդրայ բոլոր քրիստոնէից՝ որոնք հոն կ'աշխատին :

Տիմոնթէսավարդէս վարդապէտ մի հետ մէկտեղ , բաւարար կ'ըստ Վմեն համար կ'աշխատին ձեռած այն արդարն ու անմեղը . և ովէ տորկով ծախուած արդարը , որոյ համար կ'ըստ Տիմոնթէս մարդարէին ձեռաօք ինչպէս վերն ըսինք , թէ չորրորդ ամբարշտութեան համար Վւետեաց երկիրն երեկը չ-

կ'աղաստէ , և ինքը հետեւեալ օրը կը դառնայ ի Սուէկ : Նշանակութեան արժանի է Վրժ . Տիմոնթէսս վարդապէտի աղդամիրութիւնը և բարի նախանձը , և իւր սրբազն պաշտօնին մէջ ցոյց տուած անձնանուիրութիւնը զոր անշահասէր ոգւով կը կատարէ ի պատիւ սուրբ Վմոռույս , ընդունելով և ոչ իւր ըրած ծախով զոր յօժարութեամբ կ'ուղէին հասուցանել պանդուխու աղդայինք . որոնք մեծ երշանկութիւն համարելով իրենց սուրբ Վմոռույս նուիրակաց հնա արգելութիւն և արտասուալից աչօք իրենց շնորհակալութիւնը յայտնելով , կը յայտնէին միանդամայն իրենց սրտին ցաւը՝ զուրկ ըլլալով հոգեւոր առաջնորդէ մի , զոր Յարլիպատակէն կը յուսան , որ 7 ժամ հեռու է իրենցմէ , և տարին գոնէ երկու անգամ կը նոյն գէլժ քահանացի մի միջոցաւ անոնց հոգեւոր պէտքը մատակարարել :

Վպրիլ ամսոյ 27 ին անդղիսական շոգենաւով կը մեկնին ի Շիտուն :

## ԿԻՐՈՆԱԿԻԵՄԵՅ

ՍԱՄՈՒԵԼ ԹԱՅԵԲԻ ԵՒ ԷՒՐ ԳԻՐՔԸ

(Հարունակութիւն . առօ թիւ 4:)

ԳԼՈՒԽԻ Ը .

Յէ իւլ իւրդուլ Քընուանի սպանուելէն յետոյ յընելուն Արեւելը ըստ հարդարենուեան Դանիէլ :

Ալ վախնամ , Տէր իմ , թէ ովէ Եւսայի մարդարէին ըսած այն արդարն ու անմեղը . և ովէ տորկով ծախուած արդարը , որոյ համար կ'ըստ Տէր՝ Վմոնթէս մարդարէին ձեռաօք ինչպէս վերն ըսինք , թէ չորրորդ ամբարշտութեան համար Վւետեաց երկիրն երեկը չ-

ովհանի գարձընէ : Կ'երեւի նաև , Տէր իմ , թէ ՚ Վանիէլի թ . գլխայն մէջ գրա ծը կատապուեցաւ , ուր կ'ըսէ , “ Ո ամ սան երկու եօթներկաց լրանալէն յետոյ պիտի սպաննաւի ՚ Քրիստոը . եւ այն առեն պիտի գայ ժողովուրդը գալիք առաջնորդին հետ մէկուղ , ու պիտի աւրէ քաղաքը , պիտի խորտակէ տունը ու խանկարէ զանիկոյ , ու պիտի վերնաց զանը ու լցուի ապականութիւն յաւիտենական ” (1) . Եւ ուսրակցոյ չկայ , Տէր իմ , որ յաւիտենական աւերման ապականութիւնը այս գերութիւնն է , որու մէջ հազար տարի է կը գտնուիմք : Եւ Վատուած մարդարէին ձեռքով յայտնի կ'ըսէ , թէ երբ որ սպաննեն ՚ Քրիստոը , յաւիտենական աւերութիւնը ըլլայ , ինչպէս է մեր ստերութիւնը ՚ Քրիստոը սպաննելնէն ի վեր : Եւ Վատուած զմեզ յաւիտենական աւերութեամբն այն ժամանակ վախեցոյց՝ երբ զ՚Քրիստոն սպաննեցին : Եւ եթէ ըսեմք՝ թէ ՚ Քրիստոսի մահուանեն առաջ անսպասա ու աւերակ գարձանք մէնք , ասոր պատասխան կ'ուտան քրիստոնեացք , թէ անոր մահուանեն առաջ մեր աւեր ըլլալը միայն 70 տարի էր , և յետոյ Վւետեաց երկիրը գարձանք կրկին , ու Վատուած պատուեց զմեզ և իւր շնորհը մեղ առեւ ըլլալը միայն 70 տարի էր , և յետոյ Վւետեաց երկիրը գարձանք կրկին , ու Վատուած պատուեց զմեզ և իւր շնորհը մեղ առեւ ըլլալը միայն 70 տարի էր :

(1) Եւ յետ վամբուն և երկուց և եթներորդացն քարձի օծութիւնն . և իրաւունք ոչ իցեն ի անմ . և քաղաքն և որութիւնն ապականեցին առաջնորդան հանգերք որ գացցէ . և Շնչեացին հեղեղու . և մինչեւ ի վախենն պատերազմին համառատելց կարգեցէ զուպականութիւն . և զօրացուցէ զախու բաղնաց . և յեթներորդ մի և կէս եւթներգ դի . գաղդաքցուցէ զմեղուն և զարարագու . և մինչեւ ի ծայրը անկետն ապականութիւն . և մինչեւ ցլիսիճան և ցագու նազ կարգեցէ իմերայ ապականութեան . և զօրացուցէ զախու բաղնաց . և յեթներորդ մի և կէս եւթներորգի բարձին զանք և նուերք . և ի վերայ տաճարին զգեռութիւն աւերածոյն կացցէ . և մինչեւ ի վախեն ժամանակի կատարած տացի և վերայ աւերձին :

գարէտ թեանս դէմ ընդդիմութիւն մի չեմ տեսներ . սրավհետեւ գործքով կ'ապացուցանեն մեզ , թէ տաճարը կրկին շինուելին յետոյ , երբ վաթուեն երկու եօթնեակները լրացան , այսինքն մարդարէտ թիւնը հրատարակուելին վաթուանենն եաբը , այն է ՚ Վանիէլի նայն եօթանասնեկի եօթներորդին չուրսրդ տարին , այն ժամանակ սպաննեցին զ՚Քրիստոս մեր հայրերը , այսինքն ՚ արերնէն ելելնուն 487 տարին , եւ աշխարհի ստեղծման 4036 տարին . եւ յետոյ եկաւ առաջնորդը , այսինքն ՚ Տիոտոն ու Հռովմայեցւոց ժողովուրդը . և այս մարդարէտ թեան մէջ ըստածները մեր գլուխոր բերին , որ հազար տարի է հիմայ և քիչ մ'ալ աւելիք : Եւ թէպէտ Վատուծոյ բարկութեան ներքեւն եմք , սակայն յոյս այլ ունիմք իրեն : Եւ եթէ ըսելու ըլլամք՝ թէ ՚ Քրիստոս դեռ չեկաւ , այլ պիտի գայ , և եթէ կրկին պիտի առնումք Վւետեաց երկիրը , և թէ քաղաքը ՚ սորէն պիտի շնենմք և Վատուծոյ շնորհը և մեր երլիրին մէջ պատիւը պիտի ունենամք , և թէ այս աւերութիւնը յաւիտենական է . կը պատասխաննեն մեզ քրիստոնեացք թէ ուրեմն Յիսուս ՚ Քրիստոս պատուածուցէ զմեզ պատմանեցիք , ու Տէր տասին և Հռովմայեցւոց ժողովորդեան գալատեանը կը պատասխաննեն մեզ թէպէտ թեան որ այս հազար տարուանէն աւելի վատ է : Վիսան ու եղուկ , Տէր իմ , վասն զի պատմառ մի չկայ , և ոչ յարմար ապաւէն ու ապաստան մի : Վայու ամենայնիւ ինչ որ այլ պատահի Վատուծոյ եմք ամեն դէպէրումէջ , թէ որ յուսամք իրեն :

ԳԼՈՒԽ թ .

թէ ՚ Քրիստոսի գոլուստը երկու ին :  
կը վախնամ , տէր իմ , ըլլայ որ ՚ Քրիստոս իւր առջի գալուստն եկաւ ու

կատարեց . պուլիւմեւ մեր գրքերան մէջ անոր երկու գալուստ կը գտնեմք : Առջի գալուստը մարդարէք կը նշանաւ կեն իբրեւ աղքատ ու խնարհ . խկ երկրորդը՝ փառաւոր ու մեծավայեւ լուչ . վասն որոյ ես այլ երկու գալուստեան համար ինչ որ պատահեցաց սուրբ գրոց մէջ հոս մէջ պիտի բերեմ : Առաջին գալուստեան համար կ'ըսէ Աստուած Օքքարիայի բերանով . “ Խրախ եղիք դուսոր Աթօնի . ահաքոյ վարդապետ կուգայ աղքատ , և իշխ վերայ հեծած ” (1) : Եցին գալուստեան համար կ'ըսէ Հասայի զՔրիստոս մարդուած , ու Դանիել սպաննած . Օքքարիա ու Ամովա ծախուած . և ասոնք ամենին այլ կատարեցան ինչպէս ցուցրցի ու պիտի ցուցընեմ այս գրքին մէջ : “ Օ ինքը բանի տեղ չեպեցինք , չճանցանք , ինչպէս Հասայի կ'ըսէ . այլ անուես ըրինք և անորմէ աւելի զօրացանք ” (2) : Խակ նորա փառքն ու մեծ փայելութիւնը երկրորդ գալուստեանը յացոնի կ'ըլաց , երբ կրակ ու բոց անոր դիմուցէն կ'երթայ ու կ'այրէ կը մրկէ չըրս գին եղող նորա թշնամիքը , ինչպէս որ Դաւթի և Հասայեաց մարդարէի բերանով ըսաց Աստուած . (Առջ . Դ . 3 : Հասայ . ԽԲ . 4) : Խէ կը վախեմ , Տէր իմ , ըլլաց որ Քրիստոս մահուան կրակով և ոչ ուրիշ կերպով դատելու ըլլաց զմեզ . վասն զի մէք սպաննեցինք այն մարդարէները որ նորա համար մեզ աւետիս տուին . ինչպէս Աստուած մեզի գէմ Հզիս մարդարէնն բերնով կը վիսցէ ըրբորդ :

(1) Աւրախ էր յոյժ դուսոր Աթօնի . քարտեան գուստը երաւանէմի . ահա թագաւոր քո գոյ առքեղ . արդար և փրկիչ : Նոյն հեզ և հեծեալի վերայ և յաւանակի նորոյ : Զայտ . թ . 9 :

(2) Այս վիսցութիւնն չկայ մեր թարգմանութեանց մէջ : Եւ ՏԳ . Զ գլուխը . առ միոցն կը գրանքէ , “ Դարձուցեալ զերեան իւր անորդեցաւ , և ու ինչ համարեցաւ ” :

թագաւորութիւն գրքին մէջ (1) : Այս պէս սպաննեցինք այն արդարը , որոյ համար Աստուած անվախման բարկութեամբ բարկացաւ մէզ : Ասկայն Առասուծոյ եմք ամեն գէպքերու մէջ , թէ որ անոր յուսալու ըլլամք :

Ի յաջընուն :

### ՃԱՄԱՆԱԿԱԴՐԱԿԱՎԵՐ

Կերկոց ամացո շ և 8 ին երկու անդամ հայկերաւթիւն հանդէս առեղի ունեցաւ : Առաջինը առեղւոյս Վսեմ : Խիվա փաշայի կողմէն առ բոլոր զինուորական դասա , ուր հրաւիրուած էնին նաեւ Խալամաց աւագանիքն ու Վսեմ : կառավարիչ Վազիֆ փաշայն : Խակ երկրորդը՝ որ միրալայ Ամի պէկին կողմէն տրուեցաւ , աւելի հանդիսաւոր էր և արժանի նշանակութեան : Քանզի բաց ի զօրաց գնդերէն ու զինուորական պաշտօնեաներէն՝ յատկապէս հրաւիրեալ էին նաեւ Պատրիարքունք և Հիւպատոսք : Այսու ամենայնիւ առաջինները անձամբ չկրնալ երթալինուն , և միրալայ Ամի պէկին հրաւելը սիրալ ընդունելավ , իրենց կողմէն երեք վանքերն ալ թարգմանենին խրկեցին : Հայկերութիւն համար որոշուած առեղին էր Դամասկոսի կոչուած դրան կողմը հարթ գաշտակի մի մէջ վրաններու տակ ուր երեւելի կոչնականաց համար երկու սեղան զարգալուած էր . առաջին սեղաննոցն նախագահ էր Վսեմ : Վազիֆ փաշայն , Խիվա փաշայն , Ահծ . հիւպատոսք՝ իրենց մարդիկներով և Արժ . երեք թարգմանք : Առաջ Ամուսուց կողմէն գնացողն էր աւագ թարգման Արժ .

(1) Այս խօսքս Դ . թագաւորութեանց մէջ չի կայ . այլ Գ . թագաւորութեանց ժմբ գլուխուած 10 համարին մէջ այսպէս կ'ըսէ . “ Եւ զմարդարէն քո կատարեցին որով ” :